ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ
ՏԵՂԱԿԱԼ

ЗАМЕСТИТЕЛЬ МИНИСТРА ОБОРОНЫ
РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
DEPUTY MINISTER OF DEFENCE
OF THE REPUBLIC OF ARMENIA

«15» 01 2024 թ.
№ ՊԵՆ-942-26

«ՋԵՆԵՐԱԼ ՄՈՐԻՍ» ՍՊԸ -ին
ՀՎՀՀ 00195837
ՀՀ Երևան, Ա. Տիգրանյան փ.,շ. 5/1, բն.20
հեռ.041 787 672

ՀՀ պաշտպանության նախարարության և «ՋԵՆԵՐԱԼ ՄՈՐԻՍ» ՍՊԸ-ի միջև 06.11.2023թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-23-3/8-6 գնման պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) շրջանակներում «ՋԵՆԵՐԱԼ ՄՈՐԻՍ» ՍՊԸ-ն պարտավոր էր 2023թ. 4-րդ եռամսյակի ընթացքում,բայց ոչ ուշ քան մինչև 30.11.2023թ., մատակարարել 600 հատ ռադիոընդունիչ:

Քանի որ վերոնշյալ ապրանքները մինչև 26.12.2023թ.-ը չեն մատակարարվել (ընդհանրապես չեն մատակարարվել), ուստի հիմք ընդունելով Պայմանագրի 2.1.7.1 կետի «բ» ենթակետը՝ (ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 20 օրից ավելի) ՀՀ պաշտպանության նախարարությունը **2024թ. հունվարի 15-ին** միակողմանի ամբողջությամբ լուծել է Պայմանագիրը:

Տեղեկացնում եմ, որ «ՋԵՆԵՐԱԼ ՄՈՐԻՍ» ՍՊԸ-ն պարտավոր է սույն ծանուցումը ստանալուց հետո 5 (հինգ) բանկային օրվա ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005028106** հաշվեհամարին փոխանցել **38 493** ՀՀ դրամ՝ որպես տույժ (Պայմանագրի 6.2 կետի համաձայն), որը հաշվարկված է մինչև 26.12.2023թ. ներառյալ և **21 385** ՀՀ դրամ՝ որպես տուգանք (Պայմանագրի 6.3 կետի 2-րդ պարբերության համաձայն):

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ Մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը և մասնակիցը հրավերով և (կամ) պայմանագրով

0044, ԵՐԵՎԱՆ, ԲԱԳՐԵՎԱՆԴԻ 5, ՀԵՌ.՝ (+374 10) 29 45 45, ԷԼ.ՓՈՍՏ՝ karen.brutyan@mil.am
ЕРЕВАН, БАГРЕВАНДА 5, 0044, ТЕЛ: (+374 10) 29 45 45, ЭЛ.ПОЧТА: karen.brutyan@mil.am
0044, 5 BAGREVAND STR., YEREVAN, TEL. (+374 10) 29 45 45, E-MAIL: karen.brutyan@mil.am

սահմանված ժամկետում չի վճարել հայտի, պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարները:

Հաշվի առնելով վերոգրյալը, տեղեկացնում եմ՝ Պայմանագրի միակողմանի լուծման արդյունքում պայմանագրի կատարման ապահովման գումարը կազմում է **467 400** ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900005000758** հաշվեհամարին և որակավորման ապահովման գումարը կազմում է 701 100 ՀՀ դրամ, որն անհրաժեշտ է վճարել ՀՀ ֆինանսների նախարարության կողմից բացված գանձապետական **900008000664** հաշվեհամարին:

Միաժամանակ տեղեկացնում եմ, եթե մինչև 2024թ. հունվարի 24-ը ներառյալ Ձեր կողմից վճարվի վերը նշված **467 400** ՀՀ դրամ՝ պայմանագրի կատարման ապահովման և **701 100** ՀՀ դրամ՝ որակավորման ապահովման գումարները, ապա «ՋԵՆԵՐԱԼ ՄՈՐԻՍ» ՍՊԸ-ն չի ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Նշված գումարները անհրաժեշտ է վճարել Կենտրոնական գանձապետարանում լիազորված մարմնի անվամբ բացված վերը նշված գանձապետական հաշիվներին և վճարված կտրոնների բնօրինակները, մինչև 2024թ. հունվարի 24-ը ներառյալ, ներկայացնել ՀՀ ՊՆ գնումների կազմակերպման վարչություն, 2070 սենյակ:

Կ. ԲՐՈՒՏՅԱՆ